7. Եզրափակիչ մաս.

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 182-րդ, 183-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, հոդվածներով, 361-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 362-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ի ընդդեմ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության՝ թիվ «ՀՀ ԱՆ ԵՄԱՊՁԲ-2025/31» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2025 թվականի թիվ 6 արձանագրությունն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Դիավանտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասով անվավեր ճանաչելու, նշված չափաբաժինների մասով 2-րդ փուլի հայտերի վերաներկայացում և վերագնահատում կազմակերպելու պահանջների մասին, կարճել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am